ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Լ. Գ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ, Քսաներորդ դարասկզբի արևմտահայ գրական քննադատությունը, *Երևան, Համալսարանի հրատարակչություն, 1990, 356 էջ։*

Լ. Գ. Մնացականյանի գիրքը արևմտահայ 80-ականների քննադատությանը նվիրված նրա առաջին գործի տրամաբանական շարունակությունն է։ Աշխատությունը մի անգամ ևս բերում է այն եզրահանգման, որ գիտական ուսումնասիրությունն անքակտելիորեն կապված է մեթոդաբանական ընտրությանը։

Անշուշտ, յուրաքանչյուր հետազոտող ազատ է քննության ուղիների ընտրության մեջ, սակայն մինչև այն սահմանը, երբ չեն անտեսվել հետազոտության առարկայի առանձնահատկությունները, հիմք են ընդունվում վերլուծության համապատասխան սկզբունքները, հաշվի են առնվում խնդրի ուսումնասիրության առկա վիճակը և գիտության զարգացման կենսական պահանջները։ Ահա թե ինչու առանձին արժեք է ձեռք բերում հետազոտողի կողմից ընտրված մեթոդաբանական «ինքնորոշումը», որը, առարկայի բարդության յուրահատկություններից ելնելով, հստակ սահմանագծում է հետազոտման ոլորտները, բանաձևում նյութի համակարգման սկզբունքները՝ ձգտելով հետազոտության տեսադրույթային կառուցիկության։

Գրքի առաջարանից մինչև գործը եզրափակող ամփոփումը առկա է հետազոտողի նպատակաուղղված ջանքը՝ առավել ամբողջական և ընդգրկուն մատուցելու հսկայական նյութը նրա պատմական, հասարակական և գեղագիտական արժեքի համազգային նշանակությամբ։ Առաջաբանը, ուր որոշարկվում են ուսումնասիրության նպատակը, խնդիրները, պարզում է և առարկայի համակարգման ընտրված տարբերակի բացատրությունը։ Մեկնակետ ունենալով ազգի երկու հատվածների միասնության սկզբունքը՝ հեղինակը զարգացնում է բաղկացուցիչ մասերի քննությամբ ներքին ամբողջականության բացահայտման դրույթը։ Կառուցվածքային հնարավոր տարբերակներից նախապատվությունը տրվել է քննադատության պատմության «տեղական» պարբերացմանը, ուր առանձնացվել են երկու ժամանակահատված՝ 1896—1908 և 1908—1915։ Պարբերացման հիմքում ընկած է պատմականության հայեցակետը, երբ գրական մշակութային խնդիրները լուսաբանվում են սերտ փոխազդեցության մեջ քաղաքական-հասարակական տեղաշարժերի հետ։ Այսպիսով, ներկայացվում է շուրջ մեկ ու կես տասնամյակի քննադատական շարժման ընթացքը, ուր արծարծվել են գրականության անցյալի, ներկայի ու ապառայի սկզբունքային հարցադրումները, որոնք դուրս գալով բուն գրական շրջանակներից, դալիս են դառնալու ազգի հասարակական զարգացման խնդիրներ։ Գրականագիտության արդեն ճանաչված նյութի հետ շրջանառության մեջ են դրվել նոր անուններ, նոր փաստեր ու հարցադրումներ, որոնք թելադրված են աշխատության ոչ միայն գիտական, այլև ուսումնական պահանջների անհրաժեշտությամբ։

Աշխատությունն ունի չորս գլուխ, որոնցից յուրաքանչյուրն առանձնացվելով որոշակի հարցադրումների շուրջ, ամբողջության մեջ նպատակամիտում է ներկայացնելու ժամանակի քննադատական մտքի կենդանի ընթացքը՝ պայմանավորված հասարակական-քաղաքական տեղաշարժերի ներգործուն ազդեցությամբ։ «Քննադատությունն ազգային գոյատևման պայքարում (1896—1908)» վերնագիրը ինքնին ընդգծում է ուսումնասիրության առաջին գլխի բովանդակությունը։ Հետագա շարադրանքում ժամանակահատվածը բնութագրելով մտավորական կյանքի արդեն սկսված անկմամբ, միաժամանակ բնորոշ է դիտվում օրինաչափ դարձած «տարօրինակության» շարունակությունը, այն է՝ անկման ընթացքի հետ թեև դանդաղ, բայց համառ ու հետևողական տեղաշարժերը, որոնք ընդհանուր պատկերով արդեն որոշակի իմաստ են ձեռք բերում։ Գրական կյանքի հեռանկարի հուսալի հիմք են դիտվում Սիամանթոյի «Դյուցազնորեն», «Հայորդիներ» շարքերը, Մեծարենցի «Միածանը» ու «Նոր տաղերը», Թեքեյանի, Վարուժանի բանաստեղծությունները, Ե. Օտյանի, Զ. Եսայանի, Ռ. Զարդարյանի արձակ էջերը և այլն։

Ուշագրավ է ուսումնասիրողի դիտարկումն արևմտահայ քննադատության առաջընթացում հասարակական բովանդակության նոր որակի վերաբերյալ։ Եթե 80-ականների քննադատությունը նույն ոգով լուծում էր սոցիալական, բարոյական խնդիրներ, ապա դարասկզբի

գեղագիտական ծրագիրը հարում է ավելի ընդարձակ՝ ազգային-հասարակական հարցերի։ Ազգային փրկության հեռանկարը գտնելով ազգային ոգու միասնության և ինքնուրույնության պահպանման մեջ, ոգու գաղափարը վերացականից դրվում է իրական հողի վրա՝ որպես գոյության մաքառման, վերածնության միջոց։ Ինորոշ է դիտվում այն փաստը, որ հասարակական բովանդակության անցումային որակը նախապատրաստվել է նախորդների՝ 80-ականների կանխագծումներում։

Քննադատության մեջ «ոգին իբրև ինքնապահպանման գործոն» գաղափարը դրսևորվում է «վաղվան դրականություն» երևույթով։ Այս նորովի իմաստավորմամբ է մեկնաբանվում Արտաշես Հարությունյանի առաջադրած հարցարանն ու նրա շուրջ ծավալված բանավեճը։

Ուսումնասիրողի համոզված պնդմամբ այն իր ենթատեքստում անվիճելիորեն ձևակերպում էր ազգի գոյության խնդիրն ու անկախության հեռանկարները։ Մերժելով «վաղվան դրականություն» և «գավառական դրականություն» հասկացությունների նույնացման տեսակետները, Լ. Մնացականյանն ընդգծում է հարցադրման գաղափարի ընդլայնված ազգային-քաղաքական և գեղագիտական-փիլիսոփայական բովանդակությունը։

Գնահատման նմանատիպ չափանիշներն են կիրառվում նաև քննադատության գերի ժամանակի ըմբռնումների շարադրանքում, գեղագիտական ու բարոյական արժեքների դիալեկտիկայում ազգային ավանդույթների և փոխառյալ նորույթների հարաբերակցության հարցերի քննության մեջ։ Ե. Տեմիրճիպաշյանի հայացքներում հայտնի «արվեստն արվեստի համար» սկզբունքից տարբերակվում է այլ բովանդակություն՝ դառնալով հոգևոր վերածնության ընդհանուր իդեալի դրսևորումներից մեկը։ Նշանավոր գրաքննադատի արվեստի կատարելության պահանջը հետաքրքրողի հանգամանալից քննության արդյունքով բացահայտվում է իբրև դրականության հասարակական օգտակարության և բարոյական ներգործության գլխավոր պայման։

Ժամանակի քննադատության ընութագրումներում որոշակի բովանդակության արտահայտիչ է դիտվում մի ստեղծագործության շուրջ ծավալվող տեսակետների քննությունը։ Դրանցից հետաքրքրողը, Սիամանթոյի ժողովածուներից բացի, առանձնացնում է երեք ստեղծագործություններ՝ Ինտրայի «Ներաշխարհի», Մեծարենցի «Միածանի» և «Նոր տաղերի» քննադատական անդրադարձերը։ Առաջադրվող խնդրով պարզվում են մի առանձին երկի քննության շուրջ բարձրացվող սկզբունքային հարցերը, որոնցով ընութագրվում է ժամանակի հոգևոր կյանքն առհասարակ։ Մյուս կողմից ինքնին արժեքավորվում են Սիամանթոյի, Ինտրայի, Մեծարենցի գեղագիտական մեկնակետերը, որոնք ցուցադրում են արևմտահայ պոեզիայի որակական տեղաշարժերը XX դ. սկզբին։

Մինչ այժմ նմանատիպ ուսումնասիրություններում դիմանկարի էին արժանացնում գերազանցապես գրական ընթացքի և ժամանակի քննությամբ հաստատված «գրական» անունները։ Լ. Մնացականյանը այդ իմաստով հետաքրքիր մոտեցում է հանդես բերում։ Հանգամանալի քննությամբ պարզվում են Հովհ. Սեթյանի, Տիգրան Էլքանյանի, Ռ. Պերպերյանի և ուրիշ ոչ շատ հայտնի քննադատների տեսակետները։ Դիմանկար է հատկացվում նաև Արմենին՝ չնայած ժխտողական վերաբերմունքին Մեծարենցի հանդեպ։

Եվ այնուամենայնիվ, չնայած ուսումնասիրողի ակնհայտ ջանքերին, հավանաբար նախկին իներցիայով, Մեծարենցի հակառակորդ քննադատների տեսակետները ընկալվում են վերապահությամբ և ի վերջո մեկնաբանվում իբրև բանաստեղծի և նրա քննադատների անձնական հարաբերությունների արդյունք։ Այնինչ, հակառակ տեսակետներում առկա է որոշակի գեղագիտական դիրքորոշում, որն անպայմանորեն ուշագրավ է ինքնին և պարզում է արևմտահայ քննադատական մտքի բազմաշերտ բովանդակությունը։

Արևմտահայ քննադատության ընթացքի ուղենշային դրսևորումն է դիտվում իր՝ Մեծարենցի «Ինքնադատության փորձ մը Միածանի» առիթով» հոդվածը։ Ընդգծելով այն փաստը, որ հոդվածը գրվել էր ժողովածուի լույս տեսնելուց առաջ, ուսումնասիրողն արժեքավորում է այն իբրև բանաստեղծի գեղագիտական սկզբունքների, նորագույն քնարերգության տեսական իմաստավորման ուրույն արտահայտություն։

Քննությունն ամբողջացնելով Մեծարենցի մյուս հոդվածների հանգամանալի վերլուծությամբ, հեղինակն ընդհանրացնում է ժամանակահատվածի բնորոշ գեղագիտական իրողությունները, որոնք հանգում են ի վերջո հասարակական ու գեղարվեստական մտքի ոգորումների աղերսներին։ Դրանով իսկ հերքվում է գրականության պատմագրության ոչ իրավացի-

որոշ վերապահություններ Կ. Պոլսի գրական շարժման հեռանկարային հարցադրումների կենսականության շուրջ։

Աշխատության երկրորդ «Գրական վերածննդի շարժումը և քննադատությունը (1908—1914)» գլխում հայտնաբերվում են քննադատության ընթացքի հաշորդ փուլի նոր դրսևորումները՝ կապված Թուրքիայում պետական հեղաշրջման և մամուլի ազատության հետ։ Վերջապես բացահայտ արտահայտվելու հնարավորությունը ինչ-որ տեղ ստվերում էր թողել գրական հարցերը և դա ստիպում է գրական գործիչներին նախանձախնդիր լինել մատնանշելու դրանց պտանգավոր հետևանքները։ Հեղինակը շահեկանորեն ընդգծում է ողջամիտ քննադատության շարունակվող ընթացքը արևելահայ և արևմտահայ հատվածների մշակութային հարաբերությունների մերձեցման ուղիով՝ տալով դրան նոր բովանդակություն։ Շիրվանզադեի գրական գործունեության հոբելյանը նշանակալից իրադարձություն է դառնում. առիթ մեծարելու ոչ միայն մեկ հեղինակի, այլ հանձին նրա՝ ողջ արևելահայ գրականությունը, ի նպաստ համազգային մեծ գաղափարի։

Ժամանակի գրական կյանքի ուշագրավ երևույթներից առանձնացվում են նաև տարբեր առիթներով գրական ասուլիսները, որոնք պայմանավորված էին արևմտահայ գրականության կենսական խնդիրներով։ Գրականագետի ճիշտ բնորոշմամբ դրանք դառնում են գրական փորձի հանրագումար՝ ձգտելով ազգային վերածնության իդեալին։ Շանթի, Զոհրապի, Հովհ. Սեթյանի, Ռ. Զարդարյանի ստեղծագործությանը նվիրված ասուլիսների, բանախոսությունների հանգամանալի քննությամբ ոչ միայն բացահայտվում են դրանց նպատակներն ու բուն բովանդակությունը, այլև պարզում ժամանակի քննադատության սկզբունքները, ուղղվածությունը, գեղագիտական մտածողության ուրույն առաջընթացը։

Ուշագրավ դիտում է հեղինակի կողմից այս խնդրի կապակցությամբ արևելահայ կողմի արձագանքը։ Ընդ որում, կարևորություն է տրվում ոչ այնքան գնահատականների իրավացիությանը, որքան հայ քննադատության երկու ճյուղերը «ներդաշնակ ամբողջության» մեջ տեսնող հայացքին։

Այսպիսով, արևմտահայ գրական վերածննդի շարժումը արժեքավորվում է իբրև «20-րդ դարասկզբի համազգային մշակույթի փաստ»։

Գրքում հանդամանալի տեղ է տրվել «Նավասարդ» և «Մեհյան» պարբերականներին՝ իբրև արևմտահայ գեղագիտական մտքի շարժման կարևոր հայտանիշների։ Համապատասխան բաժիններում առանձին-առանձին դիտարկելով պարբերականների նպատակներն ու սկզբունքները՝ Լ. Մնացականյանը ձգտել է դրանց ընդհանրական ոգու բացահայտմանը։ Երկու պարբերականների գործընթացը գրականագետն արժեքավորում է իբրև համազգային գրական շարժումը գիմորոշող հերթական փուլի արտահայտություն, ուր դրսևորվել են հայ քննադատության ծրագրային կանխագծումները, գեղագիտական ըմբռնումների նոր չափանիշներն ու մակարդակը։

Անշուշտ, «Նավասարդ» տարեգիրքն ու «Մեհյան» հանդեսը ժամանակի գրական կյանքի ուշեղնային բովանդակության արտահայտություններն էին և միանգամայն արժանի այն տեղին, որ հատկացնում է հեղինակը նշված պարբերականներին իր աշխատության մեջ։ Հասկանալի է նաև, որ ուսումնասիրողը ելնելով որոշակի նպատակներից, ձգտել է իրոք հսկայածավալ նյութից առանձնացնել առավել բնորոշ և օրինաչափ երևույթները և բավարարվել դրանց քննությամբ։ Սակայն կարծում ենք, ինչ-որ սահմաններում անհրաժեշտ էր տեղ գտնել նաև այնպիսի հանդեսների գործունեության լուսաբանման համար, որպիսիք էին «Շանթը», «Ոստանը», «Ազդակը» Պոլսում, «Հայ գրականությունը» Զմյուռնիայում։ Դարասկզբի արևմտահայ գրականության յուրաքանչյուր հետազոտող անպայման առատ նյութ է քաղել ժամանակի գեղագիտական մտքի այս շտեմարաններից, սակայն բուն ուսումնասիրություններում դրանց արժեքն ու նշանակությունը դեռևս լիովին չեն բացահայտված։ Ցանկալի կլիներ, որ դարասկզբի արևմտահայ քննադատության ուսումնասիրողը, օգտվելով հարմար առիթից, ըստ արժանվույն պարզեր նաև այս պարբերականների դերը գրական վերածննդի շարժման ընթացքում։

Ժամանակի գրաքննադատության ամբողջական նկարագիրը լրացնում են նշանավոր քննադատների դիմապատկերները։ Առանձնացնելով դրանցից Ա. Զոպանյանին և Ա. Հարությունյանին, որոնց նվիրված են աշխատության վերջին՝ երրորդ և չորրորդ գլուխները, հեղինակը նրանց բեղմնավոր գործունեության արժեքավորմամբ բացահայտում է քննադատական մտքի զարգացման համապարփակության ձգտումը, ուր համաշխարհային գեղագիտական լափա—

նիշները ծառայում են ազգային մշակույթի խնդիրներին։ Ինչպես Ջոպանյանը, նույնպես և Ա. Հարությունյանը իրենց տեսակետների իմացաբանական հիմքը հաստատել են եվրոպական գեղագիտական ուսմունքների, մասնավորապես պոզիտիվիզմի փիլիսոփայության սկզբունքներով։

Աշխատության հեղինակի կողմից ճշգրտվում է Ջոպանյանի տեղը գրական վերածննդի շարժման մեջ։ Քննադատի գործունեության սկիզբը կապելով 80-ականների տեսական ու գործնական ծրագրերին, Լ. Մնացականյանը այնուհետև քայլ առ քայլ բացում է նրա լայնածավալ քննադատական ժառանգության շերտերը, ուր փաստացի ներկայանում է մեծ մտավորականի բազմահարուստ վաստակը։ Նրա բազմաթիվ հոդվածների, էսսեների, գրախոսությունների մանրակրկիտ քննությամբ, «Անահիտ» հանդեսի գրապատմական արժեքի գնահատմամբ ի ցույց է գրվում Ջոպանյանի մեծ ավանդը հայ բանասիրության, գրականագիտության, գրական քննադատության պատմության մեջ։

Արտաշես Հարությունյանի քննադատական ժառանգության քննությունը բացահայտում է նրա գեղագիտական ծրագրերի հեռանկարային արժեքը։ «Վաղվան գրականություն» գաղափարի ձևակերպումներում, որոնք դրսևորվեցին մի շարք հոդվածներում և նրանց շուրջ ծավալված բանավեճի հարցադրումներում, դրական դիմանկարների շարքում բնութագրվում է քննադատի կայուն հավատամքը։ Ուսումնասիրողի բնորոշմամբ այդ հավատամքի էական հատկանիշը «կյանքի սկզբունքն է» գրականության և քննադատության մեջ։ Հոգևոր վերածնության գաղափարի նպատակաուղղվածությունը քաղաքական ազատության իդեալի արտահայտությունն էր դարձել ժամանակի գրականության և քննադատության մեջ։ Ա. Հարությունյանի գեղագիտական հայացքների քննությամբ ամփոփելով ուսումնասիրությունը, գրականագետն ամբողջացնում է XX դ. սկզբի արևմտահայ քննադատության դիմագիծը ազգային հասարակական մտածողության տարածքում։

Ուսումնասիրությանը բնորոշ է մի հետևողական որակ, այն է՝ անաչառ քննություն, ուր բացառվում է անվերապահ հիացումի պահը, դիտարկվում են վիճելի տեսակետները, քննադատների թույլ և ուժեղ կողմերը՝ անկախ նրանց հեղինակության և նշանակալիության աստիճանից։ Հենց այդ մասնագիտական հայացքն է, որ թույլ է տվել գրականագետին բացելու ընթերցողի առաջ դարասկզբի հայ մշակույթի կարևոր ոլորտներից մեկի՝ քննադատական մտքի քննհանուր պատկերը իր ուրույն ընթացքով, զարգացման առանձնահատկություններով և առանձին գործիչների նշանակալի ավանդով։

Լ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու.